

ԿԿԿ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

**ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ  
(ԱՆՋՐԴԻ ՑԱՆԲԵՐ) ՄՇԱԿՄԱՆ**

# ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐՆ

**Ի. Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՐ**

**1936 թ.**

631.52

L-40

**Ա. Զ. ԵՐՆԵՇԻ**

**Բազու — 1935**

631.52

Գրականորեն բոլոր յերկրներն, միացեք

2009

L = 40

կպ

ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ  
(ԱՆՋՐԴԻ ՑԱՆԲԵՐ) ՄՇԱԿՄԱՆ

# ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐՆ

Ի. Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՐ

1936 թ.

Մ. Զ. ԵՐՆԵՐ  
Բազու — 1936



02 MAY 2013

17.072  
19299

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Բրիգադներում ուժերի ճիշտ դասավորու-  
մը, լծկանների հատուկ խնամքը, մեքենաների  
լրիվ ու ժամանակին վերանորոգումը, վորակա-  
վոր սերմերի առանձնացումն ու ձեռք բերումը  
—գարնանացանի հաջող գրավականն է հանդի-  
սանում:

Հիմնական ուժը Լեոնային Ղարաբաղի հա-  
մար դեռ մնում է լծկանը, վորին պետք է կե-  
րակրել զոռկանոնների համաձայն, թե գիշերը  
և թե ցերեկը:

Ագրոկանոնների լրիվ կիրառումը, Ստախա-  
նոյյան ձևի աշխատանքը կբարձրացնեն բոլոր  
կուլտուրաների բերքատվությունը և կհասցնեն  
Մարյա Չեմչենկոյի արտադրանքի չափին, և այդ-  
պիսով կկատարվի մեծ առաջնորդ Ընկ. Ստա-  
լինի պատվերը—յերկրին տալ 7-8 միլիարդ փուլթ  
հացահատիկ:

Հատուկ ուշադրություն պիտի դարձվի տեխ-  
նիկան թամբած կադրերի վրա, վորոնցից է  
կախված ամեն ինչ, վորոնք ցույց են տալիս  
աշխատանքի բարձր արտադրողականություն:

002



3549-53

Բարձր բերքատուլության համար մղվող պայ-  
քարի ընթացքում պիտի հատուկ տեղ զբաղեն  
կոլտնտեսային մասսայական փորձերը, խրճիթ  
լաբարատորյաների աշխատանքը:

Ագրոկանոնների կիրառման բնագավառում  
մեծ գործ ունեն կատարելու դաշտավարական  
բրիգադիւրներն ու ողակավարները:

Ագրոկանոնները պետք է մանրամասն ու-  
սումնասիրվեն բոլոր կոլտնտեսություններում,  
բոլոր կոլտնտեսականների սեփականությունը  
դարձվեն:

Ագրոկանոնների խախտման յուրաքանչյուր  
դեպք պետք է հաշվի առնել իբրև բերքատուլու-  
թյան բարձրացման միջոցառման տապալում, և  
պետք է նման յերևույթներն ու փորձերը ի-  
րենց բնույթով խեղդել, իսկ մեղավորներին պա-  
տասխանատուլության յենթարկել:

Մարզ հողվարչության վարիչ՝ Արզանյան

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ (ԱՆՋՐԴԻ ՑԱՆՔԵՐ) ՄՇԱԿՄԱՆ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐՆ Ի. Լ. ՂԱՐԱԲԱ- ՂԻ ՀԱՄԱՐ 1936 Թ.

### ԳՈՏԻՆԵՐ (ՋՈՆԱՆԵՐ)

Ագրոկանոններն ըստ տեղական պայմաննե-  
րի ճշտելու համար Լ. Ղարաբաղի տերրիտորիան  
բաժանել ենք 3 գոտու.

ա) ԴԱՇՏԱՅԻՆ ԳՈՏԻ (ՆԱԽԱԼԵՌՆԱՅԻՆ),  
վորի մեջ են մտնում Մարդակերտի բամբակա-  
ցան յենթաշրջանը, Ստեփանակերտի՝ Ասկերանի  
յենթաշրջանը, Մարտունու շրջանի Մուղանլու-  
ջի, Գեվորգավանի և Աղողանի հողամասերը,  
Հաղրութի շրջանի Ոխչիի, Թողարանի, Առա-  
քյուլի այլ հողամասերը, վորոնք ծովի մակերե-  
վույթից 500—600 մետրից ավելի բարձր չեն,  
տեղումների տարեկան գումարը 422 միլիմետր  
է և ջերմության միջինը 13,2°.

բ) ՄԻՋԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՏԻ, վորի մեջ են  
մտնում բոլոր շրջանների այն հողամասերը, վո-  
րոնք ծ. մ. -ից 550—1000 մետրի վրա յեն զբա-

Նըվում, մինչև անտառների սկավելն են ընկած ու մթնոլորտային տեղումների տարեկան գումարը 543 միլիմետր է լինում, շերմության միջինը 10,2°.

գ) ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՏԻ, վորի մեջ են մտնում 1000 մետրից (ծ. մ.) բարձր ընկած հողերը՝ անտառային մասսիվը և նրանից ավելի բարձր ընկած հողամասերը: Մթնոլորտային տեղումների տարեկան գումարը 652 միլիմետր է լինում:

Ծանոթություն. — Միջոցառումների կիրառման դեպքում բարձր լեռնային գոտու արեվակող լանջերը (գյուհե) կարելի յե հավասարացնել միջին լեռնային գոտուն, իսկ վերջինիս արևակող (գյուհե) հողամասերը՝ դաշտային գոտուն:

## 1. ՅՈՐԵՆ, ԳԱՐԻ. ՎԱՐՍԱԿ ՅԵՎ ՀԱՃԱՐ

1. ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ. — Խամացած և թփերով ծածկված հողերը հերկելուց առաջ պետք է ազատել մեծ, գութանի ընթացքը խանդարող քարերից, թփուտներից: Քանդված կամ առաջացած փոսերը լցնել հողով և հավասարացնել:

Դաշտային մկներին վոչնչացնել, ցորենի գրավչանյութ դնել աշնանը նրանց բների անց-

քերում, յերբ արտերը կանաչել են կամ ձմռան ու վողջ գարնան ընթացքում, յերբ կանաչը դեռ չի բարձրացել:

Գրավչանյութը թունավորում են մկնդեղային թթու նատրով կամ մկնդեղական նատրով: Մկնդեղային թթունատր ծախսվում է 1 կիլոգրամ ցորենին 40 գրամ, մի հեկտարին 75—100 գրամ:

2. ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ. — Մի քանի տարվա ընթացքում խամ թողած, հանգստացած հողերի վրա հիմնական հերկը կատարել աշնանը, մինչև ձմեռվա ցրտերն ընկնելը, բարձր լեռնային գոտում՝ մինչև հոկտեմբերի վերջը, միջին լեռնային գոտում՝ նոյեմբերի վերջը և դաշտային գոտում՝ վոչ ուշ քան մինչև դեկտեմբերի վերջը: Ամարաթ, նախորդ տարիներին ցանջի տակից դուբս յեկած հողերը ցանկալի յե, նաև վոր սառնացել արվեն, սակայն պարտադիր կերպով այդպիսի հողերը պիտի հերկվեն:

Դաշտային գոտում՝ հունվարին ու փետրվարին,

Միջին գոտում՝ փետրվարին ու մարտին.

Բարձր լեռնային գոտում՝ մարտին ու ապրիլին:

Հիմնական հերկը կատարել գութաններով 16—18 սանտիմ. խորությամբ, կոճղարմատ

մուլախոտերով պատած հողերում մինչև 20 սանտիմ. խորությամբ:

Սառնացելը կրկնահերկել յերեսավար, խողանավար գութաններով կամ չորս խոփանի կլպիչներով: Մնացած վարերը յերեսավար են արվում, յեթե մուլախոտ ե բուսել նրանց վրա, չկամ սնբացել են:

Ցելավոտ հողերերը հերկվում են անմիջապես ցանքից առաջ, լրիվ՝ 16—18 սանտիմ. խորությամբ: Բուր հերկված հողերը ցանքից առաջ ծանր յերկաթե զիգգագով ցաքանվում են ու ապա նրանց վրա շարքացան արվում:

Շաղացանի հողերը պետք ե անպայման ցանքից առաջ փոցխվեն, ցանվեն, ու նորից ցաքանվեն սերմը հողում թաղնլու համար:

**ՊԱՐԱՐՏԱՅՆՈՒՄԸ.**—գոմաղբով պարարտացնել կարելի յե միայն հերկից առաջ գարու ե վարսակի համար առանձնացվող հողամասերը\*):

Գոմաղբը պիտի լինի հասունացած, վոչ թարմ, հեկտարին գցել 20 տոննից վոչ ավելը Հանդում (գարնանը ցանքից 15 որ առաջ) փոել ե յերեսավար անելով (մինչև 8 սանտիմ.) խառնել հողի հետ: Դաշտում կուշտեր չզնել գարնանը, այլ անմիջապես փոել:

\*) Գոմաղբը կարելի յե ձմեռվա ընթացքում դուրս տանել հանդի ծայրին, ձանապարհի յերկարությամբ կուշտեր զնել կուշտերը հողով ծածկել ե թոզնել մինչև գարուն:

**3. ՍԵՐՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.**—Սերմերը պետք ե անպայման գտվեն՝ ցորենը տրիեբի վրա, իսկ գարին, վարսակն ու հաճարը տեսակավարիչ մեքենաների վրա կամ ծայրահեղ դեպքում խախախներով:

Թունախեղդվում են նախորդ գտված սերմերը: Առանց գտելու սերմերը չպիտի թունախեղդել:

Գարին ու վարսակը թունախեղդել թաց յեղանակով. դրա համար 1 մաս ֆորմալինը խառնել 300 մաս ջրի հետ կավի, կամ փայտի ամանում, տակառում:

Մի տոնն հացահատիկին զնում ե 600 գրամ 40 տոկոսանոց ֆորմալին:

Թունախեղդման գործը հանձնարարել այդ աշխատանքն իմացող ու վարժված մարդկանց ե դեկավարով շրջնողվարչության ցուցմունքներով: Զտված սերմերից պետք ե սերմային լաբարատորիային նմուշներ ուղարկել ե նրանց մաքրության տոկոսը, ծլունակության տոկոսն ու տնտեսական պիտանիությունը վորոշել: Մուսակությունը վորոշել 2 անգամ. 1) Անան վերջը՝ վատի փոխարեն լավը շուտ ձեռք բերելու համար ե 2) ցանքից 2 որ առաջ:

Նմուշներ վերցնելու գործը կատարել ագրոաշխատակցի ղեկավարությամբ:

Բրիգադիւնները պարտավոր են իմանալ ցան-  
վող սերմի պիտանիութիւնը:

4. ՅԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.—Բարձր բերքա-  
տրվութիւնն է ստացվում այն ցանքերից, վորոնք  
կատարվում են ամեն հողամասի համար հար-  
մարազույն ժամկետում:

Գերավաղ ցանքերի վերջնական ժամկետներ  
են համարվում.

Դաշտային գոտու համար՝ փետրվարի 20-ը,  
Միջին լեռնային գոտու համար՝ մարտի 1-ը,  
Բարձր լեռնային գոտու համար՝ մարտի 10-ը:  
Ցանքի սովորական ժամկետներ են սահման-  
վում գարու համար՝

Դաշտային գոտում—փետրվարի 20-ից մար-  
տի 10-ը:

Միջին գոտում—մարտի 10-ից ապրիլի 30-ը:

Բարձր գոտում—ապրիլի 10-ից ապրիլի 30-ը:

Վարսակի համար՝

Դաշտային գոտում—փետրվարի 20-ից մար-  
տի 20-ը:

Միջին գոտում—մարտի 10-ից ապրիլի 10-ը:

Բարձր լեռնային գոտում—մարտի 20-ից  
ապրիլի 20-ը:

Ցորենի համար՝

Դաշտային գոտում չի ցանվում:

Միջին գոտում մարտի 15-ից ապրիլի 10-ը:  
Բարձր „ ապրիլի 1-ից մայիսի 10-ը:  
Հաճարի համար՝

Դաշտային գոտում չի ցանվում,

Միջին գոտում՝ մարտի 20-ից ապրիլի 20-ը,

Բարձր գոտում՝ ապրիլի 15-ից մայիսի 15-ը:

Գարնան գարին և վարսակը դաշտային գո-  
նայում ցանվում են նաև ձմեռամտին՝ դոնդուր-  
մա: Դոնդուրմա ցանքերը կատարել նոյեմբերի  
10-ից մինչև 30-ը:

Վերոնիշյալ ժամկետների սահմանում բաց  
հողամասերի հետևյալ վերջնական ժամկետներն  
ընդունել.

Հանդի անունը	Ցորեն	Գարի	Վարսակ	Հաճար

5. ՅԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ. — Դաշտային ու հարթ  
հողերում շարքացան անել, բայց վոչ քիչ շրջ-  
հողվարչութեան տված պլանից իսկ սարալանջե-  
րին ու անհարթ հողերում թույլատրել նաև շա-  
ղացանը: Ցանքի խորութիւնը կախված է հողի

դրությունից: Խոնավ հողերում սերմը գցել 2-3 սանտիմ. խոր, իսկ յերեսից չորացած հողերում՝ 4—5 սանտիմ: Չոր, թավ չունեցող հողերում արգելել ցորնի սերմ գցելը:

6. ՅԱՆՔԻ ՆՈՐՄԱՆ. — Մի հեկտարի վրա քիչ սերմ գցելուց ցածր բերք է ստացվում, իսկ չափից շատ ցանելուց ավելորդ սերմ է ծախսվում: Պիտի պահպանել ցանքի հետևյալ նորմաները (կիլոգրամներով).

Կուլտուրա	Ցանքսի ձևը	Դաշա. գոտի	Միջին գոտի	Բարձր լեռ. գոտի
Գ. ցորեն	չարքացան	—	100	90
	չաղացան	—	110	100
Գ. գարի	չարքացան	110	125	130
	չաղացան	120	140	150
Վարսակ	չարքացան	110	120	130
	չաղացան	120	130	140
Հաճար	չաղացան	—	130	150

Ցանքերի գոնալ տարածության չափերից յեկներով ցանքի միջին շրջանային նորմաներ են ստացվում (կիլոգրամներով)

Շրջան	Ցորեն	Գարի	Վարսակ	Հաճար
Մարդակերտ	1 0	145	130	150
Ստեփանակերտ	115	140	135	145
Շուշի	110	145	140	150
Մարտունի	115	135	130	140
Հաղբուլթ	105	140	135	—

Այս նորմաները վերաբերվում են 90 տոկոսից բարձր ծյունակություն ունեցող սերմերին (կոնդիցիոն): Այս նորմաների ցածրացումը կամ բարձր ցումը կատարվում է միայն շրջողվարչության գրավոր թույլտվությամբ:

7. ՔԱՂՀԱՆ. — Մինչև արաի ցողունակալելը գարնանացան հացահատիկների ցանքերը պետք է քաղհանել մանրակրկիտ ձևով: Հայնատերև մուլխոտերը արմատից կտրել, իսկ հացազգի խոտերը ամբողջ թփերով պոկել: Արաի չորս կողմը, սահմանների վրա բուսած խոտերը մինչև ծաղկելը հարել:

Մուլխոտերով հարուստ առանձին հողակրտորներում քաղհանը կատարել 2 անգամ:

8. ԲԵՐՔԱՀԱՎԱՔ. — Գարնանացան հասկավոր հացահատիկները պետք է հնձել լրիվ հասունացման շրջանում:

Յորենի թափվող տեսակները պետք է հնձել մոմային հասուենության շրջանում:

Վարսակը հնձել այն ժամանակ, յերբ նրա հուրանի ներքևի հասկիկները լրիվ հասունացել են: Յուրաքանչյուր առանձին հողամասում հունձը վերջացնել հասունացման որից հաշված.

Յորենինը՝ 8 որում,

Գարունը՝ 8 — 10 որում,

Վարսակինը՝ 6 — 7 „

Հաճարինը՝ 7 — 8 „

Իբրև կորուստի դեմ պայքարի միջոցառումներ կատարել հետևյալը.

1) Թույլ չտալ, վոր արտը վաղանի:

2) Հնձելուց հետո թափված հասկերը հավաքել տալ:

3) Խրձերը դաշտում փանջաք դնել և թողնել առնվազն յերկու որ, վոր լրիվ չորանան:

4) Խրձերը կալ տեղափոխել հատակին կարպետ կամ բրեզենտ փռած սայլերով, իսկ բեռնակիր անասունների վրա սարքավորել խրձակալներ, քարաքաշաններ:

5) Պառկած արտերը ձեռքով հնձել:

6) Բարձր և միջին լեռնային գյուղերում խոզանը (քյուլաշը) սանտիմետրից բարձր չպիտի թողնել, իսկ անասնապահական կոլտնտեսությունները կերային ֆոնդն ուժեղացնելու հա-

մար պետք է հարեն յերկար բոյ ունեցող խոզանը.

7) Հողամասի վրա արտը համարել հնձած վերջացած, յերբ աշխատանքը ընդունել է նախագահը:

9. ԿԱԼՍՈՒՄ: Խրձերը դաշտում 2 որ մնալուց հետո կալսիչի մոտ կամ կալ տեղափոխելուց անմիջապես սկսել կալսումը: Կալերում կամ կալսիչի մոտ խրձադեզերն ախպես դնել, վոր անձրեփները ներս չծծվեն ու խրձերը չփտացնեն, նրանց տալ թիթեղյա տանիքի ձև, ուղղահայաց իջնող ճակատներով, կողերով:

Սրգելել հասարակական ճանապարհներին ու տներին բակերում խրձադեզեր դնելն ու կալսելը:\*)

Սմեն մի խրձադեզի շուրջը այն դնելուց հետո և նրանից 5 մետր հեռու 1,5 — 2 մետր լայնությամբ առու փորել և մեջը ջուր բաց թողնել, կամ թե չե հերկել, սևացնել՝ հեռվից գալիք կրակների դեմ պաշտպանած լինելու համար: Կալերում կամ կալսիչի մոտ հակահրդեհային պատրաստի սարքավորում պահել:

Սերմերի վորակը լավացնելու համար կալում կամ կալսիչի մոտ խրձերից ընտրովի տեսակի հասկեր ջոկել, փուռնջ անել և փուռ ջարած

\*) Հին կալերի վրա մինչև կալ գցելը մնացորդները չոր դամանի, ծղնոտի կամ ցաքի հետ վառել:

հասկերն առանձին կալսել: Ավելի բարձր վորակի (Չահելագլած) սերմ ունենալու նպատակով փնջած հասկերը կրտել և կորտ արած հասկերն առանձին կալսել:

Փունջ և կորտ անելու առաջադրանքի չափը վորոշում են գյուղխորհուրդը և կոլանովարչությունը:

Կալսելու ժամանակ առանձին սորտերը չբխանել:

Մի սորտի կալսումը վեռջացնելուց հետո կալսիչը կամ կալը պետք է մաքրել վոչ մի հասկ նույնիսկ վոչ մի հատիկ չթողնել թափված:

Կալսելու սերմացու հատիկը տեղն ու տեղը գտել արիերի կամ տեսակավորիչի վրա: Սերմացու հատիկը կալսիչի տակից դուրս գալուց կամ սովորական կալում կալսելուց հետո, պետք է փռել, չորացնել և հետո ամբարն ածել:

Հացահատիկի ամբարը պետք է արտահանել, յեղած մկներին, վաղիներին ու յերկարակնձիթ միջատներին վոչնչացնել ու հետո հատիկ ածել:

Չոր, միջանցուկ քամհարվող ամբարում հատիկը 1—1,5 մետրից ավել շերտ չպիտի ունենան:

Սերմացվի ընտրությունը կատարվում է դեռ արտը կանգնած ժամանակը առանձին կալսվում է, հատուկ ջանասիրությամբ գտվում, չորաց-

վում և առանձին ամբար է ածվում:\*) Ապահովագրական ֆոնդերն ել առանձնացվում են կալում բարձր վորակի հատիկից:

## II ԸՆԴԵՂԵՆՆԵՐ

Ընդեղեններից ցանվում են Լ. Ղաբաբաղում սիսեռը (նոխուզ) և տափվուռնը:

Սիսեռը ցանվում է դաշտային և միջին լեռնային գոտում, իսկ տափվուռնը բարձր և միջին լեռնային գոտում:

Ընդեղենների շարքին է պատկանում նաև լորին, վորը ցանվում է բանջարանոցում և բանջարանոցային կուլտուրաների խմբին պիտի դասել:

1. ԸՆԴԵՂԵՆՆԵՐԸ բարձր բերք են տալիս յեթե ցանվում են սառնացել արած հողերում: Դրա համար 18—20 սանտիմ. խորությամբ սառնացելն անհրաժեշտ համարել:

Սառնացել չարած հողերը պիտի վաղ գարնանը հերկվեն լրիվ խորությամբ այն հաշվով, վոր հերկը կատարվի ցանքից առնվազն մի ամիս առաջ:

2. ՍԵՐՄԻ ՆԱԽՍՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ. — Ցանքից առաջ սերմը տեսակավորել և վտիտ, թույլ հատիկները ցանքի համար չորգտադործել:

\*) Կատեգորիկ ձևով արդելվում է սերմ ֆոնդի առանձնացումը չգափած հատիկից:

3556556



Սերմացու հատիկների մեջ վնասատուներ չպիտի լինին: Վնասատուներից ազատվելու համար սերմացուն թունախեղգել, ակտահանել:

Շլոնակությունն ստուգել և 90 տոկոսից ցածր ծլունակությամբ սերմերը փոխարինել ավելի բարձր վորակի սերմացվով: Իրա համար սերմերի նախնական ստուգումը կատարել ձմեռամտին և վերջնական ստուգումը՝ ցանքից 20 որ առաջ:

3. ՅԱՆՔ.—Սիսեռը ցանել շարքացան: Շարքացան պիտի արվեն նաև մաշը, փիյաղա լորին:

Տափվուռնը և վոսպը թուլատրվում է շաղաղան կատարել ի նկատի ունենալով, վոր այն գլխավորապես ցանվում է լեռնային հողերում:

Միջլարքային տարածությունը 45 - 60 սանտիմ., ցանքի խորությունը՝ 4—5 սանտիմ.: նայած հողի տեսակին և խոնավության աստիճանին: Փուխը թեթև հողերում, խոնավուրյունը պակաս հողերում սերմը զցել ավելի խոր, քան ծանր ու խոնավ հողերում:

Թրջած սերմերով ցանելը թուլատրվում է միայն խոնավ հողերում կամ ջրովի տեղերը:

4. ՅԱՆՔԻ ՆՈՐՄԱՆ.—Մի հեկտարին կոնդինցիոն սերմ զցել ըստ գոտիների (կլիոզրամներով)

Գոտի	Սիսեռ	Տափվուռն	Վոսպ	Վ. Լորի
Դաշտային	190	—	—	—
Միջին	100	90	70	60
Բարձր լեռն.	—	100	80	60

5. ՅԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.—

Կուլտուրա	Դաշտային	Միջին	Բարձր լեռ.
Սիսեռ	10—30/IV	25/IV—15/V	
Տափվուռ.	—	25/III—15/IV	10/IV—15/V
Վոսպ	—	25/III—20/IV	1/IV—25/IV
Լորի	15/IV—5/V	25/IV—10/V	5/V—1/VI

Իերավաղ ցանք կատարել թուլատրվում է տափվուռնի նկատմամբ:

6. ՅԱՆՔԻ ԽՆԱՄԳԸ.—Շարքացան արտերի միջլարքային տարածությունները պիտի ձիու կուլտիվատորով փխրացվեն 2 անգամ:

Թե շարքացան և թե շաղաղան արտերը քաղհտնել 2 անգամ:

Առաջին անգամ քաղահտնել յերրորդ դույզ տերևները դուրս գալուց, և միաժամանակ նոս-

րացնել սիսեռի ու լորու ցանքերը, նույն բնում  
Թողնելով 2-ից վոչ ավել բույս:

Յերկրորդ քաղհանը կատարել առաջինից  
15 20 որ հետո:

7. ԲԵՐՔՍԱՆՎԱԲ.— Ընդեղենները հնձվում  
են, յերր նրանց ներքեվի պատիճները լրիվ հասու-  
նացել են: Ջպիտի սպասել, վոր բոլոր պատիճ-  
ները լրիվ հասունանան. այս դեպքում բերքի  
զգալի կորուստներ տեղի կունենան, հատիկնե-  
րը թափվում են:

Ընդեղենները քանդել ցանկալի չե, վորովհե-  
տեվ նրանք իրենց արմատներով հողը ազոտա-  
յին մննդանյութով հարստացնում են:

Շաա կարճ լինելու դեպքում միայն թույ-  
լատրվում ե քանդել սիսեռը: Սիսեռից փոքր  
խրձեր պիտի կապել, իսկ մնացածներին նկատ-  
մամբ խրձեր կապելը ցանկալի չե, սակայն  
պարտադիր չե:

Հնձած կամ հարած ընդեղենները պիտի խր-  
ձերում, լաստերում կամ լոթրակներում թողնել  
հանդում, վոր չորանան: Առնվազն 3 արև որ  
պիտի մնան չորանալու համար:

Հավաքելիս, կամ բեռնելիս պիտի զգուշ  
վարվել, վորպեսզի պատիճներն ու հատիկները  
չխափվեն:

Տեղափոխել հատակին շոր փռած սայլերով:

8. ԿԱՆՍՈՒՄ.— Ընդեղենները կալսվում են  
հասկավոր հացահատիկների նման: Միայն կալ-  
սիչով կալսելիս պիտի բարաբանի (թրուկի) և  
դեկաների հեռավորութունը կանոնավորել, վոր-  
պեսզի հատիկները չջարգվեն:

Կտլսելուց ու քամելուց հետո պետք ե մի  
քանի որ շարունակ փռել և լավ չորացնել, թե  
չե ամբարում կարող ե կծվել, լիկել և փչացալ:

9. Ընդեղենի հատիկները տեղավորել չոր,  
լավ քամանցուկ ու արտահանված պահեստում  
Միջատներից ու խոնավությունից պահպա-  
նել ընդեղենների բերքը:

### III. ՅԵԳԻՊՏԱՅՈՐԵՆ

1. ՀԱՏԻԿԻ ՀԱՄԱՐ.— յեգիպտացորենը ցան-  
վում ե սառնացել արած հողերում: Յեգիպտա-  
ցորենի հողը սառնացել անել մնացած հացահա-  
տիկներից ավելի խոր՝ 18 20 սանտիմ:

Անջրդի պայմաններում յեգիպտացորենի  
սառնացելը փետրվար ամսին ցաքանել յերկաթե  
զիզգագ փոցխով:

Սառնացնելը ցանելուց առաջ պիտի կրկնա-  
հերկ անել 10 սանտիմ. խորությամբ առանց  
առը շուռ տալու: Դրա համար գործադրել յերե-  
սավար գութաններ, կլպիչներ՝ թեվերը հանած,  
իսկ այդպիսին չլինելու դեպքում կարելի չե

Թույլ տալ, վոր կրկնահերկն արորով կատարեն: Կրկնավարը պիտի ցաքանել:

2. ՍԵՐՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.— Սերմացու յեգիպտացորենը պահվում է կողրերում և վեր է արվում ցանելուց 15—20 որ առաջ: Սերմի համար ընտրվում են միատեսակ գույն ունեցող, նորմալ դարգացած և առողջ կողրերը:

Կողրերից հատիկները վեր անելուց հետո պետք է խորից չորացնել: Դրա համար հատիկը փռել չոր և քամանցուկ շենքում բարակ շերտով ու հաճախակի փայտե թիով թիահարել, շրջել:

Ցանքից առաջ սերմերի ծլունակութունն ստուգել: Ցանելու համար անպետք են համարվում 80 տոկոսից ցածր ծլունակութուն ունեցող սերմերը:

3. ՅԱՆՔԻ ՆՈՐՄԱՆՆԵՐ ԵՆ.— 1 հեկտարին հատիկի համար ջրովի հողերում՝ 28 կիլոգրամ, անջրդի հողերում՝ 32 կիլոգրամ: Այս նորմաները վերաբերվում են տեղական սորտերին և ձիու ատամ կոչվող կերային սորտերին:

4. ՅԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐ ԵՆ.

Դաշտային գոտում ապրիլի 20-ից մայիսի 5-ը, Միջին գոտում „ 20-ից մայիսի 5 ը, Բարձր լեռն. գոտում „ 25-ից մայիսի 15 ը:

5. ՅԱՆԵԼ ՄԻՄԻԱՅՆ ՇԱՐՔԱՅԱՆ.— Միջշարքային տարածութունը բարձր և միջին լեռնային գոտում անջրդի պայմաններում 60 սանտիմ., իսկ դաշտային ու միջին լեռնային ջրովի հողերում՝ 90 սանտիմ.:

Սերմը հողում թաղել 6—7 սանտիմ. խորությամբ:

Ցանքը կատարել հատուկ յեգիպտացորենի կամ բամբակի շարքացաններով: Այդպիսին չունենալու դեպքում ոգտվել հացահատիկի շարքացանով յուրաքանչյուր 4 սերմատարից թողնելով մեկը և վերին ցա՞քի վրա աշխատացնելով մեքենան:

Շարքացան մեքենայի բացակայության դեպքում ցանքը կատարել մարկյորի տակ:

Չորացած հողում յեգիպտացորենի սերմ գրցելն արգելվում է:

6. ՅԱՆՔԻ ԽՆԱՄՔԸ.— Ցեգիպտացորենի ծիլերը դուրս անելուց արտը զիգզագով ցաքանել, շարքերին ուղղահայաց ուղղությամբ:

Առաջին քաղահանն ու նոսրացումը կատարել 5 տերեվը դուրս արած ժամանակ, նոսրացրնել 30-ական սանտիմ. հեռավորության վրա, թողնելով մեկական բույս. ջրովի հողերում 35 սանտիմ., միաժամանակ քաղհանել և ապա, յեթե մոլախոտերը դուրս են արել, միջշարքային

տարածութիւնը փխրացնել կուտիվատորով:

Բներում թողնել 1—2 բույս:

Փխրացումը կատարել 7—8 սանախիմ. խորութեամբ ձեռն կուտիվատորով կամ ձեռքի քեթմենով: Յերկրորդ քաղհանը կատարել և բներում թողնել 1 ախան բույս:

Յերկրորդ փխրացումը կատարել հողի յերեսը կեղևակալելուց կամ մուխտուտերը յերևան գալուց հետո:

Անջրդի հողերում յերաշտի դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ է, և պահանջվում է կատարել նաև յերրորդ մշակումը:

Բշտիկավոր մրիկով հիվանդ բույսերը պետք է պոկել, ցանքից դուրս տանել և այրել, վորպեսզի մնացածներին չվարակեն:

Չրովի հողերում մինչև ցանելը կատարվում է նախացանքային արաթ, իսկ բուսնելուց հետո ջրվում են ծաղկման սկզբում և ապա հատիկները լցվելու շրջանում:

Չրել միջարքային ակոսներով, վորոնք քստացվում են ձիով կուտիվացիա կատարելուց հետո, կամ պետք է պատրաստել քեթմենով փխրացնելու ժամանակ:

7. ԲԵՐՔԱՆԱՎԱՐԸ. — բերքահավաքը կատարել հատիկները լրիվ հասունանալուց հետո: Պոկոտած կողրերից տերեփները (շապիկը) հեռաց-

նել և ապա չորացնել: Այդպես էլ կողրերում պահել և ամեն անգամ գործադրելու բաժինը միայն կալսել հատուկ յեզիպտացորենի ձեռքի կամ մեխանիկական շարժիչի կալսիչով:

Սերմացու յեզիպտացորենը պահել կողրերում և կախ տված վիճակում, վորպեսզի քամի թակի: Բարձր խոնավութիւն ունեցող յեզիպտացորենի սերմը ստոնամանիքների ազդեցութեան տակ հեշտութեամբ կորցնում է իր ծլունակութիւնը:

#### IV. ԿՈՐԵԿ

Կորեկը ցանել գարնանը հերկած հողերում, վորի կոշտերը մանրացնել ծանր յերկաթե փոցխերով ու հետո ցանել:

Ցանքի ժամկետներն են համարվում.

Դաշտային գոտում՝ ապրիլի 15-ից մայիսի 5-ը,

Միջին գոտում՝ ապրիլի 25-ից մայիսի 15-ը, Բարձր լեռնային գոտում՝ մայիսի 1-ից մայիսի 25-ը:

Ցանքի նորման՝

Դաշտային գոտու համար 18 կիլո.

Միջին գոտու » 20 »

Բարձր լեռն. գոտու » 22 »

90 տոկոսից ցածր ծլունակութեան սերմերը խոտանվում են:

Յանքի խորությունը՝ 2—4 սանտիմ:

Շարքացան անել և միջարքային տարածությունները 2 անգամ մշակել բարձր բերք ստանալու համար: Միջարքային տարածությունը 30—45 սանտիմ: Լեռնալանջերին ցանել շաղափան:

Կորեկը քաղհանել 2 անգամ, առաջին անգամ՝ ցանելուց 15 որ հետո, յերկրորդ անգամ՝ 30 որ հետո:

Միջին և բարձր լեռնային գոտիներում, մանավանդ լեռնալանջերին արգելել ցեխ զբաղեցնել կորեկով: Կորեկի ցանքը թույլատրելի համարել պարարտ հովիտներում ու հարթություններում, այն հողամասերում, վորոնք կարիք ունին քիչ խեղճանալու, նվազելու, վորպեսզի գալիք հացահատիկի ցանքը չհոռանա և չպակի: Կորեկը հնձել, յերբ նրա հուրանի ծայրի հատիկները հասունացել են, չսպասել, վոր ամբողջ հուրանը հասունանա, կամ ցողունը դեղնի, այլապես հացահատիկի մեծ մասը կթափվի:

Կորեկի խրձերը մեծ զգուշությամբ տեղափոխել տակն ու կողքերը ծածկած սայլերում, կալում գյուղ դնել (կոթի վրա ցցած), վոր չորանա ու հետո կալսել:

Կորեկը կալսելուց հետո փռել ու լավ չորացնել, մանավանդ սերմացուն:

Նմբազրեց Ս. Բարսեղ.

Թողարկու Ա. Արեան.

Istehsalata verilmiş 9/1—36 Capa imzalanmış 19/1—36 Cap listi № 1, Kağız format 72×105. Baş Mətbuat Mədirliyi Məvəkilliyi № 9156. Sifariş № 21, Tiraž 2500. Azərbaycan № 2. Azərbaycan mətbəəsində əsərlər 26-lar ədədə „Kitab Sarajı“ Əli Bəyramov kəçəsi.



« Ազգային գրադարան



NL0175996

13/1936  
17.072

30 qər.

A. Ş. S. Ç. X T. Q.  
Dərlük Qarabaqda jaz Əkin  
Qampanjası haqqında

AZƏRNƏŞR  
Kənt təsərrüfat şöbəsi  
Bakı - 1936